№ 159 Օգոստոսի 27 (Սեպտեմբերի 8) 1881 Օգոստոսի 27 (Սեպտեմբերի 8) № 159

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրված են միևնոյն հասցեատուն մէջ։

Յայտարարութիւնները գնում են տողերի համար։

Տպագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի եւ տոն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում է ամեն տեղում։

Յայտարարութիւնների համար գնվում են հրատարակչի տանից 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Մուռատից, Նամակ խմբագրին, Ներքին լուրեր—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հայոց խնդիր, Բոլգարիա, Թիւրքիա, Ֆրանսիա—ԽԱՂՈՂ ԼՈՒՐԵՐ—ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ. — ԾԱՆՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՒԱԿԱՆ, Նկատողութիւններ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՒՌՈՒՏԻՑ

Օգոստոսի 18-ին

Մուռուտ գիւղը, որ գտնվում է Գանձակից մօտ 18 վերստ հեռաւորութեամբ, հարաւակողմն, ունի 19 տուն հայ ժողովուրդ։ Այս գիւղը կառավարվում է ազրբիջների ձեռով, նրանի ոչ գետ և ոչ գետակ. այստեղ վարուցանքը դմնայ է (անջուր է)։ Գանձակեցիներից շատերը այստեղ են ամարանոց գնում. ով մի քանի տարի առաջ տեսել է այս գիւղին չրջապատած խոտ անտառը, այժմ չէ կարող իր աչքերին հաւատալ թէ գտնվում է նոյն գիւղում և իր առաջ երևող վրիլահողերը երբեմն անտառի տեղ են բռնում. այստեղ չէ միայն որ մեր հայ գիւղացիք առ հասարակ անտառների հետ շատ թշնամաբար են վարվում. ոմն մեղադրենք....

Մուռուտը ունի մի հատ քարնայ եկեղեցի, նոր չինած, գեռ չծծված, չունի հատատուն քահանայ. հովուում է մօտիկ Սուլուք գիւղի քահանան. սա էլ միայն ամէն օրերն է գիւղում երեսուր. գիւղացիք մի տիրացու առաջարկելով խնդրում են հոգևոր իշխանութիւնից ձեռնադրել և նշանակել իրանց գիւղի վրա հատատուն քահանայ, բայց նրա ձեռնադրութիւնը չատ է ուշանում. Աւում են ուշանալու պատճառը ֆինանսային վկայականների բացակայութիւնն է։ Այս գիւղի եկեղեցում, որ մի և նոյն ժամանակ ուխտատեղի է գանձակեցւոց համար, ամեն օր 16-ին Աստուածածնայ ամէնն մեծ բազմութիւն կար. ամէն տեղ կը լսէիք զուռնայ, քամանչայ, կը տեսնէիք վրանները,—մի խօսքով այս գիւղը մի առանձին կենդանութիւն էր ստացել։ Իշխան Մէք. Պետ. Բեհբուդեանցի, աչխատութեամբ և գործակցութեամբ ամեոյս 17-ին մեր գիւղում կայացաւ. ներկայացում չօգուտ Գանձակի օբիրջական գպրոցի։ Մուտք եղաւ մօտ 35 րուբլ. խաղացվեց «Լչ չգիտ ինչ, կամ երկու սիրահարներ» կատակերգութիւն մի արարատեղ, հեղին. Ղմին Ցէր Գրիգորեանցի և «Պատկերներ. չան գիւղում, կինոներ, Անի քաղաք, կենդանի պատկեր «Ոգի Հայաստանի»։ Ներկայացուցը չատ գոհելի չէր, մինչև անգամ քննութեան ենթարկելը աւելորդ եմ համարում, բան որում գործող անձինք գրեթէ մանուկներ էին, բացի պ. Ն. Երեանցեանցը, որը բաւականին լաւ կատարեց Ներսէսի Մեծքօ հարուստ վաճառականի դերը. Իսկ ինչ վերաբերվում էր կենդանի պատկերներին, աւելի ևս «Ոգի Հայաստանի», որը կատարեց տիկին Ա. Երեանցեանցը, հիանալի էր. հասարակութիւնը մեծ բաւականութեամբ հեռացաւ և երկար ժամանակ ծափահարութեամբ յիշատակութիւն յայտնեց թէ տիկին Երեանցեանցին և թէ իշխան Բեհբուդեանցին։ Անտրակտներում ածում էր շամիրի խումբը «Թառը»։ Ներկայացումից յետոյ խաղացին լեզգինկա պարը։

Տեսնենք Գանձակի թիմքած հասարակութիւնը կը կարողանայ մի օգուտ քաղել իշխանի ներկայութիւնից, թէ դարձեալ իր հնդարեան քնով քնանալով, կը մոռանայ ամէնայն ինչ։

Գանձակ քաղաքի հասարակութիւնը խոր քնով քնած է. մեզանում գտնվող ինտելիգենցիան կանգից շատ հեռու ապրելով, մոռելութեան կէսին է հասած. Նրանց արթնացնող է հարկաւոր։

Մ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԴՐԻՆ

Աբասաբատան, 18 օգոստոսի

«Մշակի» 149 համարի առաջնորդող յօդուածից լսացանք, որ պ. Սանասարեանց մտադիր է կարճի մէջ բանալ մի գպրոց։ Այդ լուրը մեզ ուրախ է տալիս մի առաջարկութիւն անել, որը յուսով եմ առանց ուշադրութեան չի մնայ։

Էջմիածնի ճեմարանի վերաբերութեամբ վերջին կարգադրութիւնները մեզ հասկացրին արդէն թէ այսուհետև այդ հաստատութեան մէջ ինչ մարդիկ, ինչ ուղղութեամբ և հոգով պէտք է գործեն. կը նշանակէ ուրեմն թէ ինչ մարդիկ այսուհետև այնտեղ այլ ևս չեն կարող գործել և իրրև պարզ հետևանք վերև ասված կարգադրութեան այս վերջիններս պէտք է հեռանան ճեմարանից։

Մի տարի սոցանից առաջ լսեցինք, որ Էջմիածնից ուղարկվեցաւ Երեսուն Ներքին ուսանող մանկավարժութիւնը ուսանելու յատկապէս ճեմարանի համար, մի գովելի գործ, որ արել էր ճեմարանի կառավարութիւնը։ Հ. Խորէն վարդապետ այս սեպտեմբերի մէկին պէտք է լինէր Էջմիածին իրրև ճեմարանի մանկավարժութեան ուսուցիչ, ուրեմն, իսկապէս ասած, ճեմարանի ուսումնական մասի գլխաւոր առաջնորդ։ Բայց այս տարիս նոր, յանկարծակի և անակնկալ տնօրէնութիւնները և յեղափոխութիւնները՝ իմ կարծիքով բոլորովին առաջին նպատակը տանում վրա արին։ Մենք այդ տնօրէնութիւնների արժանաւորութեան մասին ոչինչ չենք կամենում ասել, այդ կը ցոյց տայ ապագան, միայն այժմ հարկաւոր ենք համարում յայտնել, որ այժմեան գործող անձինքների նշանակելը հ. Մատթէոսին հեռացնել կը նշանակէ. Պ. Սեդրակ Մանդինեան հրաւիրված է ճեմարանի համար մանկավարժութեան ուսուցիչ, ուրեմն և խորէն Մանկունին այլ ևս տեղ չը կայ, որովհետև նոյն առարկայի համար էր նա ուղարկված Եւրոպա և նոյն նպատակի համար էր նա այսքան ժամանակ այնտեղ աչխատում. Այսպէս ն. Մատթէոսին միայն է առանց գործի և գուցէ նորա ամրողջ մի տարուայ աչխատութիւնը Եւրոպայում ի զուր անցնի մեզ համար.

Աչքի առաջ ունենալով այս հանգամանքը, մենք հետևեալ առաջարկութիւնն ենք անում պ. Սանասարեանցը կարճի մէջ բաց է անում գրպրոց։ Որպես մի այդ գպրոցը չը լինի մեր բազմաթիւ անգոյն գպրոցներից մէկը, պ. Սանասարեանցին անչուշտ հարկաւոր կը լինի ընտրել մի հասկացող, եռանդուն և հայ հոգով մանկավարժ, որը կարողանար յիրաւի գպրոցին մի յայտնի, ժամանակին, տեղին և հանգամանքներին յարմար ուղղութիւն տալ նոր մանկավարժական հիմունքների վրա։ Այդպիսի յարմար և բոլորովին գործին ընդունակ մարդ մենք գըտնում ենք ն. Խորէն Սանփանէին, որը կարող էր կարճի մէջ հիմնելի գպրոցի պատասխանատու լինել։ Սրա վրա կը գարձնենք պ. Սանասարեանցի ուշադրութիւնը։ Մենք յոյս ունենք, որ նա կը համոզվի այս առաջարկութեան օգտակարութեան մէջ և կը հրաւիրէ Հ. Սանփանէին ընդունել այդ վատ պաշտօնը, եթէ արդէն յանձնած չէ ուրիշին։

Ցաւով ենք նշնպես, որ ն. Խորէն Սանփանէին կընդունի այս մեր առաջարկութիւնը, թող մի փոքր մեր ուսումնական գործոցների իրանց ուշադրութիւնը դարձնեն Հայաստանի վրա և յանձն առնեն առաջնութեան պաշտօնը, առնեն իրանց վրա խաչը և մանեն այդ ահաբեկեալ երկիրը ժողովրդին յարաբերութեան տալու։ Էջմիածնի ճեմարանի համար փոքով այնտեղի տնօրէնների ճաչակին համեմատ չատ մարդիկ կը գտնվին, բայց Հայաստանի համար սակաւ են.... Թող մեր կողմից ն. Սանփանէին առաջինը հանգամանքը նրան քաջ յայտնի էր։ Ես իմ ձեռքումս ունեմ մի նամակ յիշեալ Թերթի խմբագրից, որից պարզ կարելի է եզրակացնել, որ Թերթի նպատակը և բաժանորդագրութեան պայմանները բոլորովին ուրիշ են։

Ահա ինչ է գրում յարեալի պարոնը։

«Մեզ ոտ բժիշկը, ցանկանալով առողջացնել իր հիւանդին, աչխատում է միշտ նրա խաթերին չը կպչել և առհասարակ յարմարվել նրա բնաւորութեան և հոգեկան պահանջների հետ։ Իսկ եթէ նմանութեան հետ կապված է և իդեալական մարդասիրութիւն, այն ժամանակը բժիշկը հիանդին առողջացնելուց յետոյ ոչ մի նիւթական չնորհակալութիւն չէ սպասում նրանից, այլ բաւականանում է միայն այն համոզմունքով թէ մի մարդու կեանք խլից մահի բերանից։ Այդ համոզմունքը և առողջացած հիւանդի պլատոնական չնորհակալութիւնը նմանը և մարդասէր բժշկի համար բաւական է։ Փոյթ չէ թէ նա գեղ ու զարմանի համար ծախսեր է արել մի քանի տարի չարունակ և դրանով բոլորովին աղքատացել, նա գործել է յանուն մարդասիրութեան և նրա ստացած բարոյական բաւականութիւնը բոլորովին վարձատրում է նրան։

«Հայոց ազգը այսօր գաղարապէս մի հիւանդ մարմին է։ Ես—համարձակվում եմ կարծել—մի նմուտ և մարդասէր պուբլիցիստ—դիւանագէտ եմ. իմ բարոյական պարտականութիւնն է նպաստել բոլոր ուժերով թէ մասամբ և թէ նիւթականապէս այդ ազգի վերականգնմանը։ Մանկութիւնից իմ մէջ ծնել է սաստիկ սէր դէպի հայերը, և, ճշմարիտ, չէ կարելի չը սիրել հային նրա թէ ներքին և թէ արտաքին արժանաւորութիւնների համար։ Ամենաբարձր էսթետիքական վայելչութիւն է ինձ համար դալել նրա տաճ քթի վրա, իսկ նրա հոգին, չէ որ նրա մէջ բարոյականութեան մի ամբողջ կոդեկս է պարունակվում։ Ես սիրում եմ հայերին, և իմ սիրոյ ապացոյցը լրագրիս հայկական բաժինն է։ Բոլոր ունեցած—չունեցածս պէտք է ծախեմ, դնեմ լրագրիս վրա, որ կարողանամ հայերին օգնել։ Գրամական օժանդակութիւն նրանցից ես երբէք չեմ յանդգնի պահանջել, որովհետև երբէք չեմ յանկանայ վիրաւորել իմ մեծաքիմ և հաստատուր սիրելիներին։ Լրագիրս ամեն մի հայ կարող է ստանալ ձերբասպէս յայտնելով ինձ իր հասցէն։

Ահա Journal d'Orient-ի պայմանները։

Իմ կարծիքով այդ պայմանները այնքան ձեռնտու չեն հայերի համար, որքան կարծում է պատուելի խմբագիրը։ Կարդալուց ինչ օգուտ՝—ոչ փորդ կը կշտանայ, ոչ էլ ջերդ մի բան կընկնի, միայն զուր տեղը ժամանակդ կը կորչի ես, ինչպէս հայ, լաւ ծանօթ լինելով իմ արևմտեցիների պահանջների հետ, առաջարկում եմ պարոն խմբագրին փոքր ինչ փոխել պայմանները։ Ես խորհուրդ կը տայի հետևեալ կէտերը մտցնել։

1) Ամեն մի բաժանորդ բացի լրագիրը ձրի ստանալուց կը ստանայ ամեակն 10 րուբլ խմբագրութիւնից։

2) Որպես պրեմիա տարուայ վերջը տղամարդ բաժանորդներից ամեն մէկը կը ստանայ 20 չիլ ընտիր գինի, 2 արկղ պատուական սիգար, մի արկղ փայլուն կարտ և մի ֆրանսուզի գեղեցիկ աղախին։ Գեղեցիկ սեռից բաժանորդները կընտանեն 10 ֆունտ կոնֆետկա, 5 կօրօզկա պուդր, ռևնոր գուարթացնող հեղուկից մի չիչ, որ պատրաստած է «Sahr-Sibile» բաղադրութիւնից և մի շապկա-невидимка, որի տակ համաձակ կարելի է լօրի ամուսնու հետ քեֆ առած սիրեկանի հետ մաշխարհք անել։

3) վերջապէս ամեն մի բաժանորդ վիճակ

Նոյն իսկ հիւանդութեան և մահուան պատճառը ներկայացման ժամանակ բեմի վրա մրսելն էր։ Երիտասարդ Միրազեանը, որ սիրոգների ներկայացման ժամանակ ցոյց է տուել որ ունի տաղանդ, իր ուսումը աւարտելուց յետոյ մտադիր է նուիրուել թատերական գործունէութեանը։ Չբաւերում ենք հայ հասարակութեանը անտարբեր չը գտնուել դէպի այդ բարի գործը և միջոց տալ պ. Միրազեանին շարունակել իր ուսումը։ Մենք գիտենք, որ եթէ ուրթաթվայ ներկայացմանից մի գումար չը գոյանայ, պ. Միրազեան ստիպված կը լինի թողնել գիմնազիան։ Ցոյս ունենք, որ մանաւանդ այն անձինք, որոնք մի ժամանակ օգուտ են քաղել հանգուցեալ դերասան Միրազեանի ծառայութիւններից, չեն զլանայ իրանց օգնութիւնը երիտասարդ ուսանողին։

—

«Փուրնալ դ'Օրիան» լրագրի համար ստացանք պ. Գրիգոր Եարալեանցից 4 րուբլի Առաջվայ փողերի հետ կանի 66 րուբլի։

—

«Терскія Вѣдом.» լրագրին գրում են օգոստոսի 15-ից Նաուրսկայա ասված ստանիցայից, որ Թերք գետի ամբողջ ընթացքի վրա գտնվող երկիրներում անտանելի չոգեր է անում։ Զորութիւնը չարունակվում է մի ամսից աւելի։ Ազնիվի բացակայութեան պատճառով Թոզը ճանապարհներում աննկարագրելի է։ Թէ ճանապարհորդել, թէ վերջապես չունչ քաշել դժուար է։ Կենդանիների ժանտախտը չարունակվում է և գիւղերից չատերի մէջ բնակիչները կորցրին իրանց ամբողջ տաւարը։

—

Կիրակի, օգոստոսի 23-ին եղաւ ժողովրդական գրօսանք Թիֆլիսի Ալէքսանդրեան այգում, յօգուտ մեր քաղաքում հիմնվող որբանոցի։ Ռուս «Кавказъ» լրագրին հաղորդում են որ այդ գրօսանքը տուեց ընդհանուր արդիւնք 147 րուբլի։ Չնախը դեռ յայտնի չէ։

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ կոմս Կուտայսով, որ կառավարութեան տրամադրով տեղացուց տրէական իմդիրը տարաւային Դուաստանում, կը ներկայացնի իր տեղագրութիւնների մասին զեկուցում մի առանձին յանձնաժողովին, որ կը զբաղվի տրէական իմդրի բազմակողմանի քննութեամբ։ Յանձնաժողովի նիստերը կը սկսվեն սեպտեմբեր ամսից և յանձնաժողովի անդամների թուում կը լինի նոյն իսկ կոմս Կուտայսով։

—

Ռուս նիհիլիստ, իշխան Կրոպօտկին, որին Շվէյցարիան աքսորեց իր նահանգներից, այժմ, ինչպես հաղորդում են անգլիական լրագիրները, ապաստան է որոնում Անգլիայում։

—

«Փուրնալ դ'Օրիան» լրագրի համար ստացանք պ. Եագոբ Զօհրաբեանցից 4 րուբլի Առաջվայ փողերի հետ կանի 70 րուբլի։

—

Ներկայ համարում տպում ենք պ. Ցակոբ Տէր-Յովհաննիսեանի նամակը Աբաս-Թումանից, Թողնելով այդ նամակի մէջ յայտնված մի քանի մտքերն ու առաջարկութիւնները իրան նամակագրին։ Լրագրութիւնը այն օգուտն ունի որ միջոց է տալիս ամեն մի հասկացող մարդուն արտայայտել իր անձնական գաղափարները այս կամ այն կարևոր խնդրի մասին։

—

Ստացանք պ. Ս. Գալեանից 3 րուբլ «Փուրնալ դ'Օրիան» լրագրի համար։ Ուրեմն առաջվայ փողերի հետ կանի 73 րուբլ։

—

Ղարաբաղի լուր է տարածված որ մի քանի պարոններ դիտաւորութիւն ունեն հիմնել մի նոր հայոց լրագիր «Թարխան» անունով, որ կը հրատարակվի, ինչպես ասում են, շաբաթը երկու անգամ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ԽՆԴԻՐ

Շարունակում ենք ծանօթացնել մեր ընթերցողներին «Journal d'Orient» լրագրի 34 համարի յօդուածի հետ։

Հայաստանի այժմեան դրութեան չարիքներից գլխաւորը քիւրդերի արշաւանքներն են, ասում է լրագիրը։ Նրանց պէտք է զըսպել։ Մինչև այժմ այդ չարեցին, չը նայելով որ գա շատ հեշտ կը լիներ զօրքերի կառավարիչների համար։ Ուրեմն կամ միջոցները նրանց պակասել են, կամ կամ քը։ Ազգաբնակութիւնը ապահովացնելու, նրան վտանգից պաշտպանելու համար, ա մենալաւ միջոց կը լիներ յանձնել նոյն իսկ ազգաբնակութեանը ինքն իրան պաշտպանելու հոգսը։ Քրիստոնեայ թէ մահմետական,—նրանց առաջին պահանջը՝ ապահովութիւն է։

Գլխաւոր նահանգապետը, իշխանութիւն կունենար, ուրեմն, կազմակերպել պահապան զօրքերի գունդ (ժանդարմերի) որի պաշտօնը կը լիներ պահպանել հասարակական խաղաղութիւնը։ Այդ զօրաբաժինը պէտք է անխտիր կերպով կազմված լիներ քրիստոնեաներից և մահմետականներից, որոնց փոխադարձ թշնամական համակրութիւնը հեշտ կը լիներ սկզբից որոշելու։ Այդ պահապան զօրքի գլխաւորների նշանակութիւնը կախված պէտք է լիներ նահանգապետից, որովհետև նա կը լիներ պատասխանատու սուլթանի առջև կարգի ու հանգստութեան մասին իր իշխանութեան յանձնված նահանգում։ Քրիստոնեաների և մահմետականների միացնելը մի զօրաբաժնի մէջ, որ կազմված է ընդհանուր կարգ և հանգստութիւն պաշտպանելու դիտաւորութեամբ, այն հետևանքը կունենար, որ երկու տարրերը միմեանց սերտ կերպով կը մօտենային և կը բարեկամնային միմեանց մէջ։ Այդ մօտեցնելը շատ հեշտ է յայտնաւում, որտեղ գիւղական ժողովուրդը, մասամբ մի և նոյն ցեղական ծագումից լինելով, մասամբ կրելով ընդհանուր թշուառութիւնը, ունի նոյն պահանջները, ուրեմն և նոյն ձգտումները։ Բացի սորանից պետական զօրքերի կառավարիչը պէտք է ամեն բանի մէջ, որ վերաբերվում է երկրի ապահովութեանը, հպատակվէր նահանգապետի հրահանգներին և օգներ պահպան զօրաբաժնին իր ծառայութեան կատարելում։

Նիւթական ապահովութիւնը այդ ձևով հաստատված լինելով, կարելի կը լիներ, այնուհետև, սկսել պարապել իրաւաբանական յարաբերութիւնների ապահովութեան գործով, այն է արդարադատութեան կազմակերպութեամբ։ Եւ ճշմարիտ, առանց դա աստատական կազմակերպութեան չը կայ ապահովութիւն յարաբերութիւնների մէջ, չը կայ ապահովութիւն պաշտօնեաների գիղճութիւնների դէմ, ուրեմն չը կան գրաւականներ բէֆթարիների և բարեկամութիւնների արդար և տեղական գործադրութեան համար։ Այժմեան արդարութիւնը արուեստ է մէջլիսներում, որոնց անդամները, հարկերի կապալառուներ լինելով, միջոցներ թէ անմիջապես խառն են վարչութեան գործերին և չունեն, բացի սրանից օրինագիրքի և օրէնքների մասին ամենաստորական հասկացողութիւն անգամ։ Այդպիսով օրինագիրքը նրանց ձեռքում գառնում է կամայականութեան մի միջոց, որ գործ է դրվում մի ազգաբնակութեան մէջ, որ նրբանցից պակաս էլ գիտէ օրէնքները։ Գժուար է, ի հարկէ, սկզբից ձշդութեամբ որոշել թէ ինչ բնաւորութիւն և կազմակերպութիւն պիտի ունենան գատաարանները ժողովրդի քաղաքացիական և առևտրական յարաբերութիւնները կանոնաւորելու համար, բայց այդ կազմակերպութիւնը, լինելով կանոնաւորիչ ամբողջ վարչութեան, պէտք է հաստատ հիմքերի վրա կայանայ և սկզբից կարելի է ասել որ գատաւորները չը պէտք է մասնակցեն, ինչպես այժմեան մէջլիսներում, վարչական գործերին։ Գլխաւոր նահանգապետը պէտք է ուսումնասիրի խնդիրը հակացող անձանց միջից յանձնաժողովներ կազմելով և իր մշակված ծրագիրը պէտք է ենթարկէ այն իշխանութեանը, որ հրահանգիչ ոյժ ունի օրէնսդրութիւնը գործ դնելու։ Այդպիսով հաստատված կը լինենք որ արդարադատութեան կազմակերպութիւնը համապատասխան կը լինի, որքան հնար է, երկրի հասարական և մտաւորական դրութեանը։ Արդարութիւնը պէտք է կատարի գապղ և հնկող ոյժի դերը վարչութեան վերաբերութեամբ, յանձնաժողովը պէտք է որոշի գատարանի և վարչութեան սահմանները և որ չափով վարչութեան պաշտօնեաները կախված կը լինեն գատարանից իրանց պաշտօնների մէջ գործած գեղծումների վերաբերութեամբ։

Նահանգապետը իրաւունք պէտք է ունենայ կանչել այդ աշխատանքին մասնակցելու համար և օտար տարրերը, այն չափով, որ նա ինքն յարմար կը համարի։ Հայերը ընդդէմ չեն որ օտար տարրերը, որոնք կը ներկայացնեն բնաւորութեան անկաութիւնը և եւրոպական գիտութիւնը, մանչէին յայտնի հանձնաժողովում բարձրագոյն գատարանի կազմակերպութեան մէջ։ Եւ այն ժամանակ գատարանի իրաւասութեանը կարելի էր ենթարկել վարչութեան պաշտօնեաների գործած գեղծումների քննութիւնը։

Երբ ազգաբնակութեան դրութիւնը ապահոված կը լինի պահպան զօրաբաժնի և արդարադատութեան միջոցով, մենք սիրված կը լինինք ուղղել այնուհետև մեր ամբողջ ուշադրութիւնը մի երրորդ չարիքի վրա, որ ընդհանուր է արևելքում գա հողային հարկերի ձևն է, որ կայանում երկրի բերքից տասանորդ վերցնելում։ Այդ հարկը պէտք է կերպարանափոխվի և տասանորդից գառնայ հողի յատկութիւնից և ընդարձակութիւնից վերցվող հարկը։ Ընդհատանում, քան և հինգ տարվայ ընթացքում Բօսքայի հողային հարատութիւնը աւելի քան կրկնապատկվեց, երբ անգլիացիները տասանորդի տեղ հաստատեցին land-tax ասված հողային հարկը, որ վերցվում է հողի յատկութեան և նրա ընդարձակութեան հիման վրա։

Այդ երեք բէֆթիները, եթէ լուրջ կերպով ձեռնարկված և կատարված կը լինեն, բաւական են զարգացնելու և կատարելապէս կերպարանափոխելու երկիրը։ Բայց այդ բարենորոգութիւնների իրագործման համար, նահանգապետը պէտք է վայելի բաւական ընդարձակ իշխանութիւն և բաւականացուցիչ նիւթական միջոցներ։

Այդ յօդուածից վիէննայի ֆրանսիական լրագիրը դուրս է բերում մի քանի եզրակացութիւններ, որոնց հետ մենք կաշխատենք ծանօթացնել մեր ընթերցողներին «Մշակիս» հետևեալ համարներում։

գալիս իրաւունք ունի վեր գալ խմբագրի տանը և «Ձրի» ուտել, խմել ու նրա կառքովը մեն գալ։

Ահա ինչ տեսակ պայմաններ են ձեռնտու հայի համար։

Եթէ խորհուրդս ընդունվի խմբագրութեան կողմից, բաժանորդների թիւը չատ կաբծում, որ քիչ լինի։ Գոնէ ես հաստատ կարող եմ ասել որ մի քանի օրինակ կը ստանայ հենց երևանցի Սարգիս Աղաեանցը և գարնանը, Աստուած յաջողի, իր չաթրի վրա անչուշտ չնորհք կը բերի։ Գազար Ձէր-Գազարեանցին էլ կարծեմ չատ ձեռնտու կը լիներ մի քանի օրինակ ստանալ։ Մանկունին և Մամբրէն անկասկած առաջին բաժանորդների թուում կը լինեն, իսկ Թիֆլիսի sui generis ինտելլիգենցիային պատկանողները պրեմիայի համար իսօ գլուխ կը պատռեն։ Էլ չեմ խօսում հաստատուր վաճառականների վրա՝ նրանք մշական երդուեալ բաժանորդներ կը լինեն։

Այսպիսով Վիէննայի լրագիրը կը ծագկի և չուտով պատրաստ կը տայ Հայերը կը վայելեն նրանց և խմբագրի ասկորներին «մուֆթու» ողորմի կը տան։ Գուցէ նրան արձան էլ կանգնեցնեն։ Բայց ոչ՝ «յարգս յարգարոյ, պատիւս արժանաւորաց»—ասում է առաջը։

***

Հայերը հասկանում են թէ ով է արժանի, որ արձան դրվի նրա համար։ Գոնէ ներկայումս ամենաարժանի մարդը Մանկունին է, Հասարակութիւնը, ինչպէս լսում ենք, արդէն ընտրել է իր միջից մի յանձնաժողով, որին յանձնված է մշակել Մանկունու արձանի ծրագիրը։ Յանձնաժողովի նախագահն է «Մշակի» խմբագիրը, որ մի և նոյն ժամանակը աւում են մի նշանաւոր գումար է գոնել այդ հանգիստի գործի համար։ Այո, գովելի է հայ հասարակութեան այդ ազգասիրական եռանդը։ Մեղք է, որ Մանկունու պէս մարդու յիշատակը ոչնչանայ նրա մահից յետոյ։ Թէև նրա գործունէութիւնը այնքան նշանաւոր է, որ նրա անունը դեռ չատ տարիներ հասարակութեան բերնում կը լինի, այնու ամենայնիւ արձանը անհրաժեշտ է նրա համար, որ ապագայ սերունդները մշտապէս տեսնեն այն անձնանուէր հոգեորականի յիշատակը, որ չօգնեցութիւնից կարճ միջոցում եպիսկոպոսական աստիճանին հասաւ, որ չունենալով ոչ մի իրաւունք de jure ձեռք բերից բոլոր իրաւունքները de facto, որ գիշեր ցերեկ քունը կորած իր բարեկամ Մուսինեանի հետ միասին աշխատում էին հարստացնել Էջմիածինը ամեն միջոցներով, մինչև անգամ իրանց սեփական կալքերը և աղգականների կարողութիւնը զոհելով վանքի գանձարանին, որի միջոցով Էջմիածինը մեծ զարկ տուեց հայկական խնդրին, ահագին օժանդակութիւն տալեալներին, որ կարճ միջոցում ոչնչացրեց սխմնականութիւնը, որ աստիճ տափաստրեց Էջմիածնի և հայ հասարակութեան մէջ եղած յարաբերութիւնները, որի խմբագրութեամբ վերջապես հրատարակվում էր մեր պարբերական մամուլի թագն ու պսակ, փառք ու պարծանք «Արարատ» արժանապատիւ ամագիրը։ Այսպիսի գործիչին արժանի է արձան կանգնացնել։

***

Մենք հենց գանգատվում ենք, թէ մեր վաճառականները չեն նպաստում տաճկահայերի դրութիւնը բարւոքելու հարցին, չեն օգնում նրան գոնէ նիւթականապէս։ Ինչ զրպարտութիւն! օգտա չէ մեզ տաճկահայերին, որ օրերումս Մարգարեանի չինութեան մէջ հողը փոլ եգաս, իր տակ թողնելով մի քանի ոզորմելի, թշուառ հայ մշակների, վաճառականներից, այն էլ թիֆլիսի հասուտափոր, տուգացած վաճառականից դուրս եւելի ինչ օգուտ սպասել։

Ո՞վ դուրս կը գայ արդեօք որբացած, անպաղդ ընտանիքների չաների պաշտպան... թեղե կինը երեխաները գլուխը ժողոված, քաղցած, ծարաւ սկզբը, աչքը ջուր դառած ճանապարհին սպասում է, թէ երբ պէտք է վերադառնայ Ռուսաստանից ընտանիքի հարը մի քանի տարվայ դառն քրտինքով աշխատած ապրուստով, բայց հարենական քաղցը հողից, կնօջից և երեխաներից զրկված թափառական մակը այսր փըչում է իր տանջված հոգին վաչխառուի փլատակների տակ!..

Ո՞ւր էք, պուռատիսս փաստաբաններ! Ֆանֆարօնութեան ու միամիտների աչքը ծոր փչելու մէջ չէ ազգասիրութիւնը, եթէ մարդասիրեան գնէ մի նշոյլ կայ ձեր սրտի մէջ, պատասխանեցէք թշուառ ընտանիքների չաների, ձեր առաջին եմ դնում Плевако-ի օրինակը, որի խօսքը միշտ պաշտպան է եղել թշուառների, ճնշվողի, վաչխառուի դլխին։

Նկատող